

# Ա.

- G=Գէորգ գրչի ճառընտիրը № 943 (=Կարին. 923),  
թուղթ, երկաթագիր, գրուած Հայոց ՈՆ—1201 Փրկչ.  
թուականին, Զաքարէ Ամիրսպասալարի ժամանակ:  
H=Հրաշափառ Տօնական, № 940,7, բոլորգիր, թուղթ,  
գրուած վերին Նորավանքում Մատթէոս քահանայի  
ձեռքով Հայոց ԶԵ թուին=1456 Փրկչ.  
K=Ճառընտ. № 935, թուղթ, բոլորգիր, գրել Գրեգոր  
արեղայ, Հայոց ՊԾԳ թուին [853+551—1404 Փրկչ.]:  
W=Ճառընտ. № 938, թուղթ, բոլորգիր, Հայոց ՊԾԸ. [+  
551=1402 Փրկ.] թուին, գրել Աւետիք սարկաւագ:  
[H Էջ 58<sup>w</sup>—59<sup>p</sup>, G 72<sup>p</sup>—75<sup>p</sup>, K 346<sup>p</sup>—348<sup>p</sup>, W 58<sup>w</sup>—61<sup>w</sup>]

## ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՊԵՏՐՈՍԻ ՍԻՒՆԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՂՈՒ

Գովեստ ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԹՅԱՆԴԻՆՆ ԵՒ Ի ՄԻՇՏ ԿՈՅԵՍՆ ՄԱՐԻԱՄ ՀԱՅ  
ՅՈՐՁՈՐՁՄԱՆ ՆՈՐԻՆ. ԵՒ Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ԼՈՒՇՄՈՒՆՔ ՆՈՅԻՆ,  
ՀՈԳԵԽՈՐ ԻՄԱՍՏԻԽՈԲ:

5 Բազմութիւնք քրիստոսասէր ժողովոյս արարէք զաւրս  
զայս տաւն նորազքանչ ուրախութեամբ և բերկրեսցուք ի  
սմա մեծահրաշ ցնծութեամբ: Զի ահա երկինք ձայն ա-

Տող 1 G Երանելոյն 1—4 K լիենադիրն և Երանելոյն Պետրոսի  
Սիւնեաց եղանի Ասացեալ գովեստ յամենասուրը ածածին կոյսն  
Մարիամ և ի համեմատութիւն անւան նորա: W Երանելոյն Պետրոսի  
Սիւնեաց եպիսկոպոսի Ասացեալ ի գովեստ սուրը Աստուածածնին  
Մարիամու: Բաց և բողնում ճառի սկզբից մի մեծ հատուած եւ  
սկսում է. Մի՛ ոք իշխուացէ զծնիցեալն ի սրբոյ կուսէն ասել սոսկ  
մարդ . . K եւ W ճառընտիւներից նշանակում ենի միտյն մի խնի ընթերցուած, սկզբնաւորութիւններ եւ վերշեր, ցոյց տարու համար այդ խմբի  
նորագոյն եւ մեծապէս տարելու ու ամհարազատ խմբագրութիւն լինելլ: Տիւ  
եւ Տաշ. ցոյց սոյն ճառը. էլ 2 եւ 48 Հմել. եւ Յայսմաւուրֆ Բ. սպ.  
7 ապրիլ. մի շարժ «Ռւրախ լիր», այրբենական կարգով: W-ի ժկանից և եւ  
Դեկտ. Ցուց-ի № 127 2-ը, որն աւելի Պետրոսի այս ճառը «Մի՛ ո՛վ իշխուացէ զծնիցեալն» սկսուածիով: Որքան տեղեկանում ենի Ցուցալից՝ այդ 2-ը  
մի ճառընտիւր է, բոլորգիր, բուդր, գրուած Աստուածաւուր կարողիկոսի  
ժամանակ, գրիլը Կարապէս: Ցուն 2-ը մեռի տակ լինիումեցիլ: Տող 3 Ալուծ-  
մունք Նորին 6 G ուրախութեան G բերկրեցայք Կ բերկրեցարուք

ւետաւոր առ երկիրս գոչեն և զծագումն փառաց ի  
Բեղզեեմ քարոզեն: Յանկալի է մեղ այսաւը ջրհորն  
40 Դաւթի, յորում գեան Աստուծոյ յորդահոս իջիւք բըդ-  
խեալ՝ զտիեզերս արբուցանէ: Արդարե ասեմ թէ յառա-  
ջացոյց աւրինակն զծմարտութիւնն տպաւորեաց, քանզի  
տեառնամայրն ջրհոր ինքնարուղիս կենդանի ջրոյն եղե,  
ուստի ոչ իշխեաց ըմպել որ զնայն պահէր, զի կուսականն  
45 մարմին անազու սրբութեամբ կնքեցաւ, յորմէ արդարու-  
թեան արեգակն ծագեաց և ճառագայթաւէտ լուսով զաշ-  
խարհս լուսաւորեաց:

Արդ՝ զի՞նչ ասացից կամ զի՞նչ խաւսեցայց, զի միտք  
և լեզու զարժանաւոր պատիւ կուսական տաւնիս ընծա-  
20 յել ոչ կարեն: Զի ոչրան զմարդասիրութիւնն Աստուծոյ  
չափել կարէ և ոչ թիւ զբազմամեծար յարգանս Մարիա-  
մու ի համար բերել զաւրէ: Բարէ, ո՞ այլ այսպիսի լուաւ  
սքանչելիս, եթէ տէրն և ստեղծիչն ի յաղախնոյ և ի կա-  
ւեղին ստեղծուածոյ տղայարար յանձն էառ ծնանիլ. այո,  
25 այո, քանզի կամելով զնախահայրն և զառաջին կոյսն  
կանգնել ի գլորմանէն՝ իսկապէս ծրարեցաւ յորովայնին,  
ծշմարտապէս եղե այ աւրածին մանուկ: Յաղագս որոյ և  
մէք ի վեր քան զբան զաւրս պատուեցուք, և բարձր  
քան զերկինս զերկիրս իմասցուք և հրաշափառ քան  
50 զարեկելս զկոյսն տեսցուք, և առաւել քան զհրեշտակս՝  
զհովիւսն մեծարեսցուք, և ընտիր քան զքերովրիման  
զմուռն ծանիցուք: Նու երուսաղէմ քաջ ի բաց քան  
զհրեղին կառան պայծառացաւ:

Եւ զայս ոչ եթէ մասածաւրէն ինչ ճարտասանս խաւ-

8 G առ երկիրս հնչեն 9 H ի Բեղզեեմ 10 K այ յերկնից 13 GH  
տնամայրն Կ աստուածամայր ազախինն ջրհոր Ա կենդանի ինքնա-  
րուղիս 14 G պահիւր Կ ըմպել Դաւթիթ, այսինքն Յովսէփ, որ զնայն  
պահէր 15 G սրբութեամբն 16 G ճառագայթաւետ 19 K արժա-  
նական Ը ընծայել 21 K զբազմամեծար արդանդ 23 G թէ տըն և  
ստեղծն ի յաղախնէ 25 K զնախահայրն Աղամ և զառաջին մայրն  
եւա կանգնել 29 H զերկին 31 H զքերովրէսն 32 G ԵՄ Ա ե՞մ  
33 G տառսն 34 K եթէ մարդկեղէն ինչ.

55 սից ի մէնջ աշխատասիրեցաք յարմարելց զի զսոյն և  
աստուածագիր մատեանքն յառաջաձայնեալ քարոզեցին:  
Քանզի որոյ էութիւնն յարարչագործութեան անդ ի հրեշ-  
տակաց և ի մարդկային բնութեանս զբանաւորութիւնս  
արար, զնա ինքնաղոյակն Հայր այսաւր իրրու յինքենէ  
40 ծնանի, զոր նոյն ինքն Հայր բերանով Դաւթայ խաւսեր-  
գեաց, թէ Որդի իմ ես զու և ես այսաւր ծնայ զքեզ:  
Արդ՝ յորում աւուր ստեղծիչն աւուրց և բանից  
յանձն էառ ծնանիլ վերստին, ազէ, եկ բեր զու ինձ  
ասելց թէ ո՞ր բան յառաջ մատուցեալ զայնպիսի աւուր  
45 բաւական լիցի պատմել գովութիւնու եւ եթէ բարձր  
զերիիրո քան զերկինսն իմասցուք, միթէ սնափառու-  
թեամբ ինչ պարծեցայ, աւն անդը. ո՞չ ապաքէն սպա-  
սաւորական հոգեացն եղեն երկինք բանակետդ, իսկ եր-  
կիրս բոլորիցն Աստուծոյ սեպհական քաղաք, զոր և  
50 մարդարէն իսկ յայտնապէս հնչէր, թէ Սա է Աստուած  
մեր, ընդ որում ո՞չ համարեցի այլ: Յետ այսորիկ յերկըն  
երեւեցաւ և ընդ մարդկան շըջեցաւ:  
Եւ զի բազմափառ քան զարեւելս զկոյսն Մարիամ  
տեսաք, միթէ բա՞ն ինչ մեծամոռութեամբ ի վեր քան  
55 զարժանն զանցուցաք, քաւ լիցի: Զի յոյժ պատուական  
են արեւելք վասն առուընծենային հրոյն ընդ այն ծագե-  
լոյ, այլ ո՞չ իրեւ զտեառնամայր աղախինն, յորում ա-  
մենեցունցն Աստուած բնակեաց և արեգակնաբար ի նմա-  
նէ յաշխարհս ծագեաց:  
60 Եւ զի առաւել քան զքերովրիմն զմօռւրն եղաք,

36 Կ աշխատասէր մատեանքն 37 Ա զհրեշտակաց և զմարդկան բնու-  
թիւնս արար 39 Ա իի այսաւր իրրու յինքենէ ծնանի, զոր նոյն ինքն  
Հայր 40 Ա Դաւթի 41 Սաղմ. թ. 7. • 43 Գ վերըստին յանձն էառ ծնանիլ  
Կ յանձն առ վերստին ծնանիլ Գ եկ զու բեր Կ եկ զու և բեր 45 Ա  
ի պատմել 46 Ա զերկինս 48 Ա հոգւոցն 49 Գ բոլորից Ա սեփհական  
50 Ա իի իսկ յայտնապէս 51 Թուրմ է պակասաւոր. 53 Ա բազմափայլ 56  
Գ հրոյդ Կ լուսոյն 57 Ա տեառնամայրն աղախին Կ զտիրամայր աղա-  
խինն այ 58 Ա բնակեցաւ 60 Ա եւ առաւել քան զքերովրիմն

միթէ ահասութեամբ ինչ զաննամանս բարբառեցաք: Ոչ  
ահա յորմէ վեցթևեանքն հիացեալ ի բացուստ սարսեն՝  
սա այսաւը ի մոռը անդ որպէս ի հայրական ծոց բազ-  
մի: Ուստի և մարգարեական շնորհացն բերանք՝ դիտե-  
լով զամենայն ճախր առեալ ճահողարար՝ զներքինն ընդ  
վերինն կապակցէին, մանաւանդ զի ևս առաւել քան  
զգերիվերոյսն զստորինս պարագրեցին: Զի յորոյ երե-  
սաց երկինք որպէս մօմ հալին՝ նա այսաւը ի յայրին  
ամփոփեալ զսպի: Ընդ օր և առակաւոր բանն զարմա-  
ցեալ հիանայր, թէ Զինչ երկիր իցէ յորում լոյսն ա-  
գանիցի: Զի ի յայրենի ծոցոյն որպէս հուր փայլակնա-  
ցաւ և ի խաւսուն երկրին անմիսաս ծրարեցաւ, ըստ նո-  
րին կանխասացութեանն, թէ Երկիր և ի նմանէ ելցէ  
հաց և ի ներքոյ նորա որպէս [զ] հուր շըջեցաւ, զոր միւս  
մարգարէն յայտնապէս մեկնէ, թէ Հաներ զհաց յերկրէ,  
այսինքն զմարմին իւր ի Մարիամայ սրբոյ կուսէ:

Բարէ, անպատում երանութիւնքն զկուսական որո-  
վայնն փակեցին, զոր մարգարէութեան հոգին բերանովն  
Դաւթայ՝ լեառն սուրբ անուանեաց. Հիմունք նորա,  
ասէ, ի լեառն սուրբ նորա: Արդարէ յայսմ լերին  
տնաւրինեալ անբաժանելի միաւորութեամբ երկու աշ-  
խարհըն հիմնաւորեցան՝ աստուածութիւնն և մարդկու-  
թիւնն: Վասն որոյ մի՛ ոք իշխեսցէ զձնիցեալն ի սուրբ  
կուսէն սոսկ մարդ ասել, զի ինքն իսկ հիմունս արկ  
ի նմա բարձրեալն: Որպէս և հրեշտակն քարոզեաց, թէ  
Որ ի նմայն ծնեալ է՝ ի Հոգեոյն սրբոյ է: Ասէ՝ Ոիրէ Տէր

զմուրսն եղաք 61 GH տըհասութեամբ 62 H ահա ուստի սերով-  
բէքն ի բացուստ սարսափէին հիացեալ 64 H շնորհացն բանք՝ գի-  
տելով 66 H զի առաւել 69 H զըսպի K զըսպիւր H հիացեալ զար-  
մանայր 70 Յովլ լ.թ, 19. 71 H լիմ որպէս 72 H ըստ նորուն 73 Յովլ.  
լ.թ, 5. 75 H մարգարէ 75 Սաղմ. ձկ, 15. 77 G երանութենքն H  
երանութիւնք K երանութեանն 78 G բերանով 79 Սաղմ. 22, 2.  
80 H լիմ ասէ 81 H աշխարհք 83 Սկսում k W Մ՛ ոք իշխեսցէ  
զձնիցեալն ի սրբոյ կուսէն ևայլն: H լիմ սուրբ 84 H Էարկ 84—93  
H կարկատունն և տեղ տեղ նոր գրյով կարկատանի վրայ գրուած 86 Մասր.

զղբունս Սիօնի քան զամենայն յարկսն Յակովայ: Անըս-  
կիզբն Բանն Աստուած կրկին անգամ դրունս Սիօնի  
զկուսական մարմինն յաւրինեաց, զի յասելն հրեշտա-  
90 կին զողջոյն՝ ընդ լսելիսն ի ներքս վազեաց Բանն և ին-  
նամսեայ ժամանակաւ ի մարմին զինքն թանձրացուցեալ,  
ընդ որ ամենայն մահկանացուք ծնանին՝ ընդ նոյն և ան-  
մահացուցիչ Տէրն ոչ զզուեցաւ ելանել:

Ո՞վ մեծի խորհրդոյն, մտանէր և ելանէր և զղբունս  
95 կուսութեանն փակեալ պահէր: Արդ՝ որպիսի՝ աւրինա-  
կաք զքեզ յառաջ բերեալ գովեսցուք սուրբ Աստուա-  
ծածին: Զի ահա եղեր՝ Դրախտ աստուածատունկ. Այդի  
վայելուչ. Մորենի անկիզելի. Լեառն սուրբ. Վէմ Ջրա-  
ծին. Գաւազան ծազկեալ. Սափոր ոսկի. Տուփ անուշա-  
400 հոտ խնկոց. Տապանակ կենդանագիր կտակին. Զրհոր  
կենդանի ջրոյն. Բոյս բարի. Տեղի շափիղայի. Քաղաք  
Աստուծոյ. Պարտէզ փակեալ. Աղբեւը կնքեալ. Բլուր  
կնդրկի. Հովիտ շուշանի. Երկիր ծարաւուտ. Ամալ թե-  
թե, Անապատ անկոխ. Դուռն աղխեալ. Տոմար անըն-  
405 թեռնելի. Երկիր բանաւոր. Առաւառտ խաղաղութեան:  
Արդ՝ զայս ամենայն մարդարեիցն պարք նախաձայնեցին:  
Իսկ մեք սկսցուք մեկնել կարգաւ զքսան և զչորս  
վիայութիւնս սրբոցն որ վասն քո:

[Ա]. Աւրախ լեր Մարիամ, Դրախտ աստուածա-  
410 տունկ. Քանզի տատուածարոյս մարմինն ի միջի քում  
որպէս զծաւն կենաց արմատացեալ, զոր ընդ բացեղէն

Ա, 20. Սաղմ. 22, 2. 88 Գ դրունս իւր Հ սիօնի 90 Հ զող-  
ջոյն Գ իննամսեա 91 Հ ի մարմին Հ [ստո]րացուցեալ, վակագծուածք  
կարկատանի վրայ նոր դրյով 92 Հ մահացուք ծնանին ն'ա նոյն և ան-  
մահից տէրն Գ անմահուցիչ Կ անմահացուցիչ 93 Հ ելա[նել յր-  
գնաւէ] 94 Գ խորհրդոյն 96 Հ յառաջարերեալ 97—105 Հմմտ. Աս-  
տուածանայ շարականներ՝ Լեառն վիմածիմ եւայլն: 101 Գ շափիւզայ 102  
Հ աղբեր 103 Գ Ովիտ 104 Հ տումար անընթեռնլի 109 Գ դրախտ  
շնչաւոր և աստուածարոյս լի աստուածատունկ քանզի 110 Գ ի մէջ

սրոյն զաւրութիւն բարձրելոյն անհպելի զքեզ տաղաւարեաց:

[Բ]. Ուրախ լեր Մարիամ, Այդի վայելուչ, յորում  
415 կամաւորութեամբ Հաւը ճշմարիտ որթն տնկէր: Կապեսցէ, ասէ, զէշ իւր զորթոյ և զյաւանակ իւր զգընդակէ որթոյ: Որթ զԱստուած Բանն ասէ և զնդակ՝ ըդմարմին նորին, զոր և ինքն իսկ Միածինն ասէր, թէ Ես եմ որթն ճշմարիտ:

[Գ]. Ուրախ լեր Մարիամ, Մորենի սիրալի, որ աստուածութեանն հրով վառեալ ոչ այրեցար:

[Դ]. Ուրախ լեր Մարիամ, Լեառն սուրբ, յորում ստեղծիչն Մովսէսի նորահրաշ տնաւրէնութեամբ առագաստեալ վարագուրեցաւ:

[Ե]. Ուրախ լեր Մարիամ, ապառաժ Վէմ, ուստի յորդահոս վտակն Խաղացեալ՝ զհամահրաւէր աւետիսն աշխարհի հնչէր. Եթէ ոք ծարաւի իցէ եկեսցէ առ իս և արբցէ:

[Զ]. Ուրախ լեր Մարիամ, Գաւաղան ծաղկեալ,  
450 ուստի յարմատոյն Յեսսեայ բղխեալ յարադալար ծաղիկն, որում յառաջացոյց յաւրինակ քահանայապետին եղեւ ցուայ, որ ի խորանի անդ առժամայն բողբոջեալ սաղարթէր:

[Է]. Ուրախ լեր Մարիամ, Սափոր ոսկի, որ ոչ զմահկանացու ընչընչուկն կրեցեր, այլ զանմահացուցիչ կերակուրն, զոր աստուածեղէն բերանն հրատարակեալ ասէ. Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին և մեռան, իսկ որ զմարմին իմ ուտէ՝ զմահ մի՛ տեսցէ յաւիտեան:

**Նորա** 112 G Հրոյն զաւրութիւն 113 G զնա տաղաւարեաց  
116 G զյովանակ յիշ իւր 115—7 Ծննդ. Խթ. 11. 117 H որթ զաստուածութիւնն և զնդակ զմարմին նորուն 119 Յովհ. ԺԵ, 1. 123 G մովսեսի 124 G վերագուրեցաւ 127 Յովհ. Է, 37. 130 G յեսսեա H ծաղիկ 132 G բողբոջէր 135 G ընչընչուկն H զինչընչուկն 136 H աստուածային G հրատարակեաց: ասէ 137—9 Յովհ. Զ, 49. Է, 51.

440 [թ]. Ուրախ լեր Մարիամ, Տուփի խնկահոտ իւղով  
լցեալ, ուստի նարդոսն մեծագնի բուրեալ և աստուա-  
ծային անուշահոտութեամբ զայեզերական տունս լցոյց:

[թ]. Ուրախ լեր Մարիամ, Տապահակ շարժուն, յու-  
րում Բանն մշտնջենաւոր եղե կենդանագրեալ և նորու-  
445 գելով ևս զջարգեալսն փոխանակ մովսիսակերտ քա-  
րեղինացն չորս բանաւոր տախտակս զաստուածական աւ-  
րէնս դրոշմեաց:

[Ժ]. Ուրախ լեր Մարիամ, Տուն կենդանի ջրոյն  
զորմէ մարդարէն ասէր, թէ Զուր ի տանէ Տեառն ելցէ  
450 և արբուսցէ զվիճակն հեթանոսաց, զոր և Միածինն  
ասաց, թէ Ես եմ ջուրն կենդանի:

[ԺԱ]. Ուրախ լեր Մարիամ, Բոյս բարի ըստ որրոյն Յա-  
կովրայ, որ արծարծեալ ի մահին առ կենարարն Քրիստոս  
զբանն տպաւորեաց, թէ ի շառաւիզէ ելեր որդեակ:

455 [ԺԲ]. Ուրախ լեր Մարիամ, Քաղաք Աստուծոյ ըստ  
երանելոյն Դաւթայ, որ յառաջն երգեաց թէ Փառա-  
ւորեալն խաւսեցաւ վասն քո քաղաքդ Աստուծոյ:

[ԺԳ]. Ուրախ լեր Մարիամ, Տեղի շափիկայի, զի  
իբրև ակն պատուական աստուածախտոն մարմինն զոյտ-  
460 նայր ի քեզ, որ և եղաւն իսկ որպէս զքար ընտիր  
ի հիմունս Սիոմիի:

[ԺԴ]. Ուրախ լեր Մարիամ, ըստ ամենիմասանոյն  
Սոլովմոնի Աղբեւը կնքեալ, ընդ որ ամենալցոյց գետն  
բղխեալ՝ զկուսութեանն կնիք ոչ ելոյձ:

465 [ԺԵ]. Ուրախ լեր Մարիամ, Պարտէզ փակեալ, որ զքազ-  
մարեր ձիթենին վերընձիւղեցեր, յաղագս որոյ Եսայիս  
մարդարէացաւ, թէ Մնացեալն Յակովրայ նորատունկ  
սիրելի. ծաղկեացէ Խորայէլ և լցցի երկիր սլտղով նորտ:

141 Հ մեծագին 142 Հ լցեալ 145 Հ ևս խորտակեալս Գ մու-  
սիսակերտ 149 = «Եւ աղբիւր ի տանկ տեառն ելցէ և արբուսցէ զնորմ վի-  
ճակաց»\* Յովկլ Դ, 19, 151 Յովկ Դ, 10 — 11, 154 Գ ի շառաւիզէ,  
Ծննդ. ԽԹ, 9, 156 — 7 Սաղմ. 22, 3, 158 Գ շափիկայ 159 Ա մարմին  
160 Հ ի քէն Հ քար 163 Հ սաղովմոնի. Երդ Դ, 12, 164 Հ զկու-  
սութեանդ 167 Գ ի էղ Հ յիսրայէլէ 167 — 8 — «Ժողովեալ» ուղիք

[Ժ.2]. Աւրանիս լեռ Մարիամ, Հովհան անվար, ուստի  
470 իրեւ շուշան վայրենի տերունական մարմինն բուսաւ,  
զորմէ հոգելից մարդարէն ճառեաց, թէ Եղէց յաւղ իս-  
բայէլի և ծաղկեսցէ որպէս շուշան:

[Ժ.3]. Աւրանիս լեռ Մարիամ, Բլուր Խնկոյ, յոր Տէրն  
մտեալ անմահութեանն հոտովն զմահկանացու նիւթն  
475 համեմէր և ծնեալ յաշխարհ կենդանեաց և մեռելոց:  
յաւիտենական ծխէր կեանս, զոր մարդարէութիւնն կան-  
խաւ գուշակէր, թէ Բուրեսցի հոտ նորա որպէս կնդրկի:

[Ժ.4]. Աւրանիս լեռ Մարիամ, Երկիր ծարաւուաւ, զո-  
րոյ զբնութիւնն ոչ իշխեաց վիթարել լուծումն արուփ\*  
480 ուստի մարդարէն զՔրիստոս ի նմա բոյս յապառաժի  
երդեաց ասելով՝ Պատմեցաւ մեզ իրեւ զմանուկ, իրեւ  
գարմատ ի ծարաւուաւ երկրի:

[Ժ.5]. Աւրանիս լեռ Մարիամ, Ամակ թեթև բատ յա-  
ռաջառացութեան մարդարէին, թէ Ահաւ ասիկ Տէր նըս-  
485 տեւալ ի վերայ թեթև ամպոյ եկեսցէ յեղիսպոսս Եւ  
արդարեւ ամակ յամաք, զի ոչ զիջացեալ ծանրացար ի  
յանկութենէ առն:

[Ժ.6]. Աւրանիս լեռ Մարիամ, Անապատ անկոխ, յո-  
րում ոչ սոսկ ոք մարդարէ զվկայութեանն գործէ խորան,  
490 այլ զմեծն և զկատարեալն և զանձեռագործ խորանն,  
այսինքն զտիրական մարմինն առանց սերման առն ստեղծ  
ինքեան, զոր ի լուսազգեստ արգանդին հարեալ սաղմէր,  
զոր և հոգեհնչող քնարն հնչէ, թէ Յարեւու եհար  
զխորան իւր:

Յակոբայ նորատւմկ բղիւսցեմ, Յաղիւսցէ Խարայէլ և լցցին տիկերէ պտղով  
նորա» Ես. Իէ, 6. 171 Գ իզի. — «Եւ եղիցի իրեւ զցող Խարայէլի և ծաղ-  
կեսցէ իրեւ զշուշան» Ալս. ԺԴ, 6. 173 Ա խնկոց 174 Ա հոտով 177  
«Բուրեսցէ հոտ նորա իրեւ զկնդրկի» Ալս. ԺԴ, 7. 179 Կ ոչ իշխեաց  
թանալ 181 Գ առէ 181—2 «Պատմեցամ առաջի նորա իրեւ զմանուկ, իր-  
եւ զարմատ ի ծարաւուաւ երկրի» Ես. ԵԳ, 2. 184 Ես. ԺԹ. 1. 186—7  
Ա ի յանկութեանց աշխարհի 189 Գ ոչ ոք սոսկ Ա լի՛ ոք Գ զվկայ-  
թեանն 191 Ա լի՛ առն 192 Գ լի՛ զոր Ա սաղմնէր 193 Ա հնչէր.

195 [իԱ]. Ուրախ լեռ Մարիամ, Դուռն աղխեալ, ընդ  
որ հրեշտակաց Տէրն մուտ և ել և զկուսական արգանդդ  
ոչ ելոյծ, յաղագս որոյ Եղեկիէլ մարդարէացաւ, թէ  
Դուռնն որ յարեելս կոյս է՝ ոչ ոք մացէ ընդ նա և ելցէ,  
բայց Տէր Աստուած Խորայէլի մացէ և ելցէ և դուռն  
200 փակեալ կայցէ:

[իԲ]. Ուրախ լեռ Մարիամ, Տոմար անընթեռնլի,  
զի թէպէտ և գիտէր Յովսէփ զդպրութիւն, զի ունէր այլ  
կին, և չէր անփոյթ ի մարմնոյ խառնութեանց, սակայն  
զնա ոչ իշխեաց ընթեռնուլ, որպէս մարդարէն ասաց,  
205 թէ Տացի թուղթս այս յայր մի, որ գիտիցէ դպրութիւն  
և մի' կարասցէ ընթեռնուլ զնա:

[իԳ]. Ուրախ լեռ Մարիամ, Երկիր բանաւոր, զի  
աստուածընկալ որովայնդ անմատոյց լուսոյն ոչ միայն  
աթոռ, այլ ճշմարտութեամբ եղեւ մայր, զոր և ոմն ի  
210 շնորհալից վարդապետացն գրեաց, թէ Նորագործ աս-  
տուածապէս Ճարտարապետեալ՝ զերկիրս Երկին արար:

[իԴ]. Ուրախ լեռ Մարիամ, Առաւաւտ գեղեցիկ,  
յորում խաղաղութիւնն մեր զարմանալի յաւրինմամբ  
արար զերկոսինն մի, և ըստ որոյն Զաքարիայ՝ արեգակ-  
215 նաբար ի մեզ ծագեցաւ, փարատել զխաւար մեղաց:

Արդ՝ զի՞նչ և այլ առակ աւրինակաց ի մէջ առեալ  
սուրբ Աստուածածնիդ կարասցուք ընծայել: Զի՞ ոչ ա-

Սաղմ. ժի, 6. 196 G Հրշտակաց Ի զկուսական կնիքն 198 G դուռն.  
198 «Եւ դարձոյց զիս ընդ անապարհ արտային դրան սրբութեանցն՝ որ  
հայեր յարեելս . . . եւ մի ոյ անցք ընդ դա, զի Տէր աստուած Խարայէլի  
մացէ ընդ դա»: Եղեկ. ԿԴ, 1—2. 199 H իիք բայց տէր աստուած իսրա-  
յէլի մացէ և ելցէ 202—4 H իիք զի թէպէտ և գիտէր — ոչ իշխեաց  
ընթեռնուլ 205 H այս առն որ 206 H ընթեռնուլ զսա, որ նշանակէր  
զՅովսէփ: 205 — 6 «Եւ Տացի նոյն զիր ի ձեռս առն՝ որ ոչ զիտիցէ զիրս,  
եւ ասացեն ցմա՝ ընթեցիր զայդ: Եւ ասիցկ՝ ոչ զիտիմ դպրութիւն»: Ես.  
ԻԹ, 12. 208 G որովայնն 210 G Նորագործապէս Ճարտարապետեալ  
210—1 «Նորագործ աստուածապէս ճարտարապետեալ՝ զերկիրս երկին արար»:  
Պատարագամատոյց: 214 G զերկոսին 214—5 Հմմտ. Ղուկաս Ա., 78 — 79.  
215 H ծագելով փարատեաց 216 G զի՞նչ առակ և այլ 217 G ընծա-

պաքէն ելեր ըստ բանս. ոչ ապաքէն գերի ի վերոյ զտար  
էակացս. ոչ ապաքէն անցեր ըստ մարդկային միաս, զի  
220 Հոգին սուրբ էջ առ քեզ և զաւրութեամբ վերնոյն  
տաղաւարեցար: Եւ այս յաւէտ յիրաւի:

9ի զԱստուած ընկալար. զի զԱստուած յղացար. զի  
զԱստուած երկնեցեր. զի զԱստուած ծնար. զի զԱս-  
տուած անպարազբելի ի գիրկս բարձեալ կրեցեր. զի  
225 զԱստուած կաթնաբուծեցեր. զի զԱստուած սնուցեր.  
զի զԱստուած գգուեցեր. և որոյ երկինք ամոռ են և  
երկիրս պատուանգան ոաից նորա, և զբնաւ իսկութիւն  
նորա և ոչ երկինք երկնից բաւական են տանել՝ դռւ  
զնաւ իրբեւ զաղայ խանձարը ապանէիր:

230 Տինա և զի կայ իմ ընդ այսպիսի մրցման կռուե-  
լոյ, ընդէր վարանեալ տարակուսեն զիս երանութեանն  
ցոյցք. զի ահա երկինքն, որ ի Սինէական լերինն բոցա-  
զարդ հրով զսանդարամետացն հիմունս գղորդեալ սա-  
սանեցուցին, և ձիոքն, որ զերկինս և զերկիր արարին,  
235 այժմ ի մէջ անցեալ իրբեւ զպարմանի՝ բաժակ ի մատունս  
բերեալ՝ աղջկան միոյ մատուցանէ:

Արդ՝ այս գովութիւն ոչ այլ ինչ է, այլ քոյին իսկ

յել 219 Ա ընդ մարդկային 220 Ա էջ ի քեզ և զաւրութեամբ բարձ-  
րելոյն 225 Շ կաթնաբոյծեցեր Ա կաթնաբուծ արարեր Կ կաթնաբ-  
րուցեր. Հմել. «Մայր ասուծոյ Մարիամ»: որ զասուած ծնար, որ զա-  
սուած կարնաբուծեցեր». «Եփր. Խոս» (ՀԲ): 226 Կ գգուեցեր, զի զած  
համբուրեցեր. Անձառ է խորհուրդս որ ի ձեռն ամենասուրբ կռւսին  
երեւեցաւ աղջի մարդկան, անքննելի, անհասանելի, անիմանալի, ան-  
հետազաւտելի ևլն. ևլն: Բաց է բողնում ՇՀ-ի մացած մասը: Նոյնն է  
անում եւ Վ գգուեցեր. Անձառ է խորհուրդս որ ի ձեռն ամենա-  
սուրբ կռւսին երեւեցաւ աղջի մարդկան ևայլն: 229 Ա արարեր.  
Հմել. եւ Արանա՝ «Խանձարրապահալ կարնաբուծեցեր», Ներբող ի ս. Աս-  
տուածածինն, Վենես. 1899, էջ 296. 230 Ա Զի՞ նա Շ Տի՞, նա, և զի՞  
կայ իմ և այլ ընդ այսպիսի մրցման կռուել 232 Շ լերինն զհիմունս  
բացարդ հրով զսանդարամետացն գղորդեալ 230—236 Այս հատուածը  
տես եւ Վենես. մի ճառներում, Արանաս, էջ 298, ծան. 7+ 237 Շ իմ

մարգարետութիւն, թէ Յայսմշետէ երանիցեն ինձ ամենայն աղղք: Արդ՝ աղաշեմք զքեզ, սուրբ Աստուածածին, լե՛ը բարեխաւս առ Որդիկդ քո և Աստուած մեր միշտ փրկել ի փորձութենէ զ'ի ձեռն քո ի նա հաւատացեալ ժողովուրդս և փառս մատուցանել ծնիցելոյդ ի քէն. այժմ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

իսկ 238 Ի մարգարետութիւնն. Դուկ. Ա, 48. 240 Գ լե՛ը մեղ ԶՀ առ որդիս 241 Գ զի ի ձեռն քո 243 Ի այժմ և յաւիտենից».

(Մնացածը միւս անգամ)

